

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 7-րդ մասի (հասարակական միջոցառումների ծրագրերը) պահանջի վերաբերյալ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը հասարակական գործունեություն է իրականացնում մարզում կրթության, մշակույթի և սպորտի զարգացման ուղղությամբ:

Կազմակերպվում են մրցույթներ, փառատոններ, բնապահպանական միջոցառումներ և մարզական մրցաշարեր:

Մարզպետարանի ենթակայության կրթամշակութային հաստատությունների կողմից կազմակերպվում են նկարների և ձեռարվեստի նմուշների ցուցահանդեսներ, ասմունքի, երգի, պարի և երգչախմբային արվեստի մրցույթ-փառատոններ:

Մարզական ոլորտում՝ կազմակերպվում են <Վարչապետի գավաթ>-ի խաղարկության մարզային սիրողական մրցաշարեր՝ լողի, սեղանի թենիսի, խճուղային հեծանվավազքի, խճուղային կրոսավազքի(երեք տարիքային խմբերով) մարզաձևերում, ինչպես նաև շախմատի, ֆուտբոլի, վոլեյբոլի, ՀՀ ԱԺ գավաթի խաղարկության(1-6-րդ դասարանների համար) մրցույթներ, գորակոչային ու նախագորակոչային տարիքի երիտասարդների ռազմամարզական խաղեր և այլ մարզամշակութային միջոցառումներ:

Հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ կազմակերպվում են քննարկումներ և հանրային լսումներ: